

ՀԱՅ ՄԱՍՈՒԼ



ՍՈՒՆ

Թ. 1 - 2, ՅՈՒՆՈՒՄԵ - ՓԵՏՐՈՒՄԵ 1940

Այս միացեալ թիւը կը պարունակէ Ս. Պատրիարքին ամանորարէր պատգամը, յետոյ իբրեւ կրօնական էջեր՝ Եղիշէ Վ. ի «Մոգեր»ը եւ Տիրայր Վ. ի «Երջանկութիւն»ը:

Բանաստեղծական բաժինը ունի քերթուածներ «Պատէն կախ» Շաւարշ Վ. ի եւ «Օրեր» Եղիվարդի: Արթուր Վ. իբրեւ արդիական հարց կը ջանայ «Եկեղեցի եւ Պետութիւն» շարունակեալ յօդուածով (Մարտ) տալ բնոյթը արդի յեղափոխական երկու մեծ շարժումներուն «Փաշիգմ» - Նա-ցիզմ» ի եւ անոնց յարաբերութիւնները Ե-կեղեցւոյ հետ: Հ. Ն. Ակինեան կը քննէ պատմականօրէն «Սարգիս Վ. Կուստ» ի կեանքը, ինչպէս յաջորդով (Մարտ) անոր մեկնողական ուսումնասիրութիւնները, այսինքն «Խմբագիր մեկնութիւն Յովհաննու Աւետարանին»: Արտաւաղ Ս. ունի թարգմանութիւնը Գոնթրոյի «Քանգուն եւ Ամուրոն երկրի դեղերն ու բուսաբանական պարտէզները»: Կ. Բասմաջեան «Ամիրտովլաթ Ամասիացի Հայ բժշկապետ» յօդուածաշարքով կու տայ տեղեկութիւններ Ամիրտովլաթի անձին եւ գործերուն վրայ (Մարտին մէջ դեղերու մասին), թելադրուած առիթէն մեծ բժշկապետի «Օգուտ բժշկութեան» գործի հրատարակութեան՝ որուն ձեռնարկուած է Հայաստանի մէջ: Օշականի «Երեմիա Զէլէպի» յօդուածաշարքը (Յունուար - Յունիս) պատմական - բանասիրական իր սահմաններէն դուրս իր ծանօթ անհատնում ցրումներն ունի եւ զնահատութիւն ու քննադատութիւն իր նիւթին հետ առնչութիւն ունեցող եւ չունեցող նիւթերու՝ դրական, լեզուական եւն., որոնց կարեւորներու մասին կը ստիպուինք յաջորդին թողուլ մեր անդադարձութիւնները տեղւոյ սղութեան հետեւանքով:

Աւետում կը դրախտէ Ա. Ծառուկեանի «Առագաստներ» քերթուածներու հատորը: Գնահատելի քերթուածաշարքին վերլուծումը կը յանդի երկդիմի վճիռի մը, ուր երկու հակառակ հետեւութիւնները անհաշտելի կը թուին. եւ արդարեւ Աւետում իր սա վճիռին քով՝ թէ «Առագաստներ հա-տորը իբրեւ յաջողած գործ մը չէ» ունի

հետեւեալ զնահատականը. «այս երգիչը ունի իր տեղը մեր օրերու վաւերական բանաստեղծներու շարքին»:

Մարտ-ի թուին «Վարդանանք» ին մէջ փառաբանութիւնը կայ Հայ դիւցազներու օրինակին եւ կտակած հոգեբանութեան, այսինքն Հայ հոգեկան ու մտաւոր արժէքներու զնահատութեան եւ փարուսին: Ներշնչուած ու դեղեցիկ է «Երգ հաշտութեան ու սիրոյ» քերթուածը Վահէ-Վահեանի:

Շարունակեալ յօդուածներու մասին արդէն ակնարկեցինք: Գրախօսական բաժնին մէջ Ե. Վ. Տ. երկու սինակի մէջ կը փորձէ վերլուծել քերթողական արժէքը Հ. Վահան Յովհաննէսեանի «Սրտերու երգը - Վանքի ծաղիկներ» չքնադ գործին որ անցեալ տարի լոյս տեսաւ մեր մամուլէն:

Որքան որ պակաս չեն հոն արուեստի եւ ներշնչման յաջող քերթուածներ, սակայն Ե. Վ. Տ. կը թուի թէ սեւ ակնոցներով դիտելով այդ գործը բացասական արտա-յայտութիւններ միայն ունի անոր մասին, ոտնակոխելով միանգամայն տաղանդը Թ. Թէրզեանի որու գործին մէջ ալ «տեղոյն անտեղութիւններ» կը շեշտէ:

Անկասկած տխուր հոգեբանութեան մը զոհն է Ե. Վ. Տ. որ մեղմելու համար բողբը իր դիտակցութեան՝ նկատմամբ իր բացասական դատումներուն, կը վերջացնէ թէ այդ բանն ըրած է «հակառակ բարեացակամ ըլլալու ճիշդին»: Հասկնողին համար բաւական է այդ խոստովանութիւնը: ԱՊՐԷԼ, ԹԻՒ 4

«Պատերազմ» խմբագրականին մէջ կ'ակնարկուի սխալ հիմերու վրայ դրուած ընկերական դիտութեան՝ որ, ինչպէս բնական է, թշուառութեան կը տանի մարդկութիւնը. եւ սխալ հիմերն են նահանջը քրիստոնէական կամ Աւետարանի հոգիէն եւ ոչնչապաշտութիւնը: խաղաղութեան եւ յառաջդիմութեան իրականութիւնը միայն Աւետարանի լոյսով եւ Աստուծոյ Հայրութեան եւ մարդկութեան եղբայրութեան գաղափարներէն կրնայ բխիլ:

Կրօնական տիտղոսին ներքեւ Ն. Արեղայ կու տայ թարգմանութիւնը «Դատապարտութիւն չկայ» Պողոսեան բացատրութեան մասին մեկնողական յօդուածի մը՝ եւ Հայրիկ Վրդ. մեկնութիւնը կու տայ

«Հսկում» ին՝ նկատելով զայն եկեղեցական հոգւոյն եւ ծիսական իմաստին տեսակէտներով: Եղիվարդի «Լեռնէն - Վար» (Իսահակի զոհի մասին) քերթուածը թէեւ ներշնչումէ զուրկ չէ, սակայն իր վերջին մասը տարօրինակ, մանաւանդ թէ անտեղի գաղափար մը կը պարզէ հոն, որպէս թէ

Քայքայուած, տրտում
Կ'իջնէր Արքաիւմ
Լեռնէն սրբազան:

Եւ եթէ հարցնէք պատճառը, քերթողը կը պատասխանէ հետեւեալ ձեւերով.

Սիրելի մէկ սիրով
Բայց չըկարեմալ մեռնիլ անոր մէջ.
Յօժար մորթել գաւակն իր միակ,
Սակայն մերժուիլ:

Կանխապէս ըսած էր նոյնը աւելի սեղմ ու դեղեցիկ.

Տարած էր իր սերն երկնքի կանչին
Մերժուած չարաչար:

Անտեղի կոչեցինք յարգելի հեղինակին մտածութիւնը, որովհետեւ ոչ միայն անբնական է, այլ նաեւ յայտնապէս հակա-սական Աստուծաշունչի պատմածին:

Եւ իսկապէս, որքան որ Արքաիւմ խոր հաւատքով ու պատրաստակամութեամբ կը փութար Աստուծոյ հրամանին համեմատ իր միակ եւ ամենասիրելի որդին զոհելու անոր, անտարակոյս միեւնոյն միջոց խոր կսկիծ մը կը զգար իր սրտին մէջ այդ անհաւոր զոհողութեան մտածութեամբն անդամ:

Զուր է գերադոյն սէր առարկել. այդ սէրը Քրիստոս ալ ունէր հանդէպ Աստուծոյ եւ անմարտնչի ու անսահման չափերով անշուշտ. եւ սակայն աղօթեց չօր, որ մահուան բաժակը չիմէր, եթէ կարելի որ մահուան բաժակը չիմէր, եթէ կարելի էր: Այնքան դառն ու անհաւոր է մահը:

Արդ, երբ Աստուած յետոյ արդիւնք որ Արքաիւմ իր զաւակը ողջակէզ ընէ, եւ Իսահակի տեղ նոյն պահուն հրաշքով խոյ մը պարզեց անոր՝ զոհի համար, Արքաիւմ բնականօրէն ուրախացաւ ոչ միայն զաւակին ողջ ունենալով այլ նաեւ անոր համար որ անհունօրէն հաճելի անցեր է Աստուծոյ իր սէրն եւ հնազանդութիւնը եւ որուն փոխարէն այնքան զնահատանք եւ օրհնութիւն վայելեց. նաեւ երգումով խոստում մը՝ թէ իր զաւակները անթիւ խոստում մը՝ թէ իր զաւակները անթիւ ու անհամար պիտի ըլլային պէս, «փոխադրուել եւ ծովափի աւազին պէս», «փոխադրուել եւ ծովափի աւազին պէս» ըսած էր նախ զի լուար ձայնի իմումը

Աստուած: Եւ արդէն Աստուծոյ ուղածը բացարձակապէս մարդագորհ չէր՝ զոր կ'ատէր ու կ'արգիլէր, այլ փորձ մը, ինչպէս կ'ըսէ Ծննդոց գիրքը. «Փորձեաց Աստուած զԱրքաիւմ»: Փորձը զմայլելիօրէն յաջող անցած էր. երբ Աստուած անհունօրէն զոհ էր, զոհ պիտի ըլլար անպայման Արքաիւմ եւս, թէ գիտակցութեամբ իր սիրոյն եւ հաւատարմութեան, եւ թէ, ինչպէս ըսինք, այնքան օրհնութեան ու բարիքներու վարձատրութեամբ:

Յետոյ կը գտնենք շահեկան յօդուածը Հ. Ն. Ակինեանի «Սարգիս Վ. Կուստ եւ իր մեկնողական երկաւորութիւնները», ուր զանազան կարեւոր մէջբերումներէն զատ բանասէր Հայրը կը ջանայ ցոյց տալ թէ Կուստի գործն է Եսայեայ մեկնութիւնը՝ զոր Հ. Գարեգին Զարհանալեան Սարգիս Ծնորհալին կ'ընծայէ: Անդին սակայն վարանոտ կը մնայ չդիտարկող յիշուած երկու վարդապետներէն որո՞ւն ընծայել նարեկոյծ մը, որ Զամէանի համեմատ Սարգիս Ծնորհալի դրած է:

Պ. Վ. Մինասեանի «Արդի աշխարհաբարի կազմութիւնն ու զարգացումը» լեզուա-գիտական յօդուածին ալ՝ որ կը շարունակէ նաեւ Մայիս - Յունիս թուին մէջ՝ պիտի անդադառնանք յաջորդով, քննելով եւ վերլուծելով իր տեսութիւնները, ուր ծայրայեղ եւ յանդուգն հետեւութիւններ կը շօշափուին:

Այրիւր կը փակուի Կարապետ Յ. Նուրեանի յիշատակին նուիրուած մահադրական էջով:

Մայիս - Յունիս. - Խմբագիրը «Յարութեան խորհուրդ» ին մէջ Հայ Ժողովրդեան կուդէ ներշնչել եւ զգացնել հաւատքը յարութեան յետ անոր չարչարանքին ու թաղման: Յետոյ ունինք թարգմանութիւնը «Ազատութիւն» կրօնական էջերուն, եւ Արթուր Վրդ. ի «Թափառական հրեան» կոչ մըն է մարդկութեան դէպի քրիստոնէութիւն՝ ճշմարիտ խաղաղութիւն եւ երջանկութիւն գտնելու համար: Վ. Մելիքեան ունի «Խորհրդածութիւններ պատե-րազմի մասին», յետոյ բանաստեղծական քերթուած մը «Դաշտերուն մէջ» Տէրու-նիի, եւ «Փայտէ սանդուխ» Արսէն Երկա-թի, երկուքն ալ զգայուն եւ պատկերաւից:

Լեզուագիտական բաժնին մէջ շահեկան է Հ. Աճառեանի տեսութիւնը «Աշխարհաբար կամ նոր Հայերէն», ուր նախ կ'ընդունի թէ ուղիղ ձեւեր են գրաբար եւ աշխարհաբար եւ ոչ գրաբար - աշխարհա-

բառ: Յետոյ կ'անցնի գրաբարի, միջին հայերէնի եւ աշխարհաբարի աղերսներն ու կախումները նշանակել, յետոյ նմոյշներ բերելով աշխարհաբարի հնագոյն գրութեանէն ժիշդարէն: Աշխարհաբարի ռաշվիրանները կը նշանակէ յատկապէս մեր Մխիթարեան Հայրերը Ինճիճեան, Գապարաճեան, եւ ընդհանրապէս պոլսեցի մխիթարեան տարրը: Այդ տեսակէտով կ'ընդունի մեր մխիթարեան հրատարակութիւններէն «Տաքեգրութիւն»ը (1799), «Եղանակ բիւզանդեան» (1803-1820) եւ «Դիտակ բիւզանդեան»ը (1812-1816), որոնց յաջորդեց «Բազմավէպ»ը:

Յետոյ կը խօսի նկատմամբ աշխարհա-
բարի ձեռակարգման (գրաբարին քով) եւ
մաքրագործութեան օտար տարրերէ։ Այս
վերջին աշխատանքներու մասին ալ Աճա-
ռեան կը շեշտէ կարեւոր դերն որ Վենե-
տիկը կատարած է 1791-էն ի վեր․ ինչպէս
ապա իրենց յատուկ դերն եւ ուղղութիւնն
ունեցան չառ մը թերթեր որոնց մէջ յատ-
կապէս Պոլսոյ «Մասիս»ը։

Հուսկ համարոտ ակնարկ մը Արեւելա-
հայ բարբառի մասին՝ հեղինակուած Լա-
զարեան ճեմարանի ուսանողութենէն, Ե-
րեւանի բարբառի հիմերուն վրայ: Առաջին
նմուշը՝ Թիֆլիսի «Արարատ»ը 1850-ին:

Պաղեստինյան արաբականներն մէջ Արտաւազդ Սրբազան կ'ամբարտանաւ տեսութիւններ եւ զանազան կարծիքներ դրախտի իսկական վայրի մասին՝ թէ արդեօք ան Հնդկաստանն⁶ մէջ էր, թէ Բաբելոնի⁶, թէ Հայաստանն⁶ եւ հռոմէական Պաղեստինի⁶ :

ՀԱՆԴԻՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՅՈՒԼԻՍ - ԴԵԿՏԵՄԲԵՐ 1940

Հայագիտական թերթս ունի շարունակ-
կութիւնը նախորդ թուի կարեւոր ուսում-
նասիրութիւններուն ինչպէս Հ. Վ. Ինդ-
լիգեանի «Հայաստանը Ս. Գրքի մէջ»,
մասնաւորութեամբ «Արարատ եւ բեւեռագրե-
րու Արարդի — Ուրարտուն» յետոյ Հ. Յ.
Տաշեանի «Հին Հայաստանի արեւմտեան
սահմանը՝ Փոքր-Հայք եւ Կողովքներ (Սե-
բաստիա)»։ Հ. Հ. Ոսկեան շարունակելի
յօդուածով մը կու տայ «Ռշտունեաց գա-
ւառի վանքերը», այս անգամ ներկայա-
ցնելով 21 հատ, յիշատակութիւններով եւ
յիշատակարաններով. ունի նաեւ «Թուանց
գիւղի Գանձակայ Ս. Գեորգ եկեղեցին»։

Հորանտացի հայազուն եւ հայաստէր Հայր Մ. Ա. Վան տէն Ուսուցիւրին, Դոմինիկեան կարգէն, ուսուցիչ Թրիպուրիկի համալսարանին, կու տայ նմոյշ մը Թրանչիսկեան

Ֆր. Փոնցիուսի լատինահայ պատարագա-
մատույցին⁽¹⁾՝ ունի թորական շրջանէն
(1945) :

11. Աբրահամեան՝ ուսուցչ. Թէհրանի
համալսարանին, կը փորձէ տալ «Տափիկ
բառի ստուգաբանութիւնը եւ պաշտաւ-
կան տուեալները», յիշելով նախ Հիւսէյ-
մանի կարծիքը՝ պահլաւ եւ որո պարսիկ
լեզուներէն ծագած՝ արաբ կամ արաբա-
կան նշանակութեամբ: Հեղինակը պահլա-
ւերէն տալիստան կամ քալստան արմատնե-
րէն կը հանէ նաեւ «վագիլ» (երազաչարժ)
իմաստը: Յետոյ կը ցուցնէ նոյնութիւնը
Տափիկ եւ Թագի բառերուն, Տափիկը կը
ծագի Թայ ցեղանունէն՝ եւ չիկ ածանցէն:
Otto Haas կու տայ «Ueber die phrygischen
Sprachreste und ihr Verhältnis zum Arme-
nischen» աշխինքն, Փոփուգեան լեզուի մնա-
ցորդներու եւ իրենց յարաբերութեան մա-
սին հայերէնի հետ եւ յետոյ Ἀχούω – Ան-
սամ Ansam բառի վրայ լեզուագիտական
համեմատութիւն մը, որու նկատմամբ
ղարմանալի է որ ոչինչ ըսած է Աճառեան
իր Արմատական բառարանին մէջ:
Վերջապէս կը ցուցնէ

գրատունեաց արքայական հարստութիւնը
Վրաստանում», եւ Հ. Մ. Ս. ի գրախօսա-
կանները՝ Եղիա Մ. Տնտեսեանի ձայնա-
դրեալ շարականին, եւ Գէորգ Աճէմեանի
«Հայերէն երգէ՛» ձայնագրած երգադա-

ԱՆԱՀԻՏ

թ. 1-3, ՅՈՒՆՈՒԱՐ - ՓԵՏՐ. - ՄԱՐՏ 1940

Պրն. Զօպանեանն ներկայ թիւը հրատա-
րակած պահուն կը խոստանար 5-6 շաբա-
թէն Ապրիլ - Մայիսն ալ լոյսի բերել, եւ
ակնարկելով իր քրոնիկի մասին՝ զոր այդ
երկրորդ թիւին կը յետաձգէր՝ կ'ըսէր թէ
«զանազան այժմէութեանց բերմամբ՝ չատ
ընդարձակ պիտի ըլլայ»:

Ձանազան, պիտի ըլլայ»։
Հակայական համեմատութիւնները վերջերս
ցած՝ կարծեմ անհատնում աղբիւր պիտի
ըլլան, աւա՛ղ, շատ տոտուր եւ արիւնոտ
էջերու, որոնց մէջ խորտակուած սրտով
պիտի կարդանք մեր սիրելի ազգակիցնե-
րու աղէտներն ալ՝ ըլլա՛յ ահեղ ճակատա-
մարտներու ընթացքին որոնց մէջ այնքան
եղբարակնորէն պարտուեցաւ մեծ Ֆրան-
սան, ըլլա՛յ միլիոնաւոր ամբոխներու

(1) Aus dem römisch-armenischen Messbuch
des Franziskaners Fr. Pontius (1345).

խուճապին ու տագնապին մէջ որու նմանը
թերեւս չէր տեսած այդ աղղը իր ծագումի
օրերէն :

* * *

Ներկայ թուին մէջ բանասիրական բա-
ժին մը կայ ընդարձակ ուր ինք Պրն. Զօ-
պանեան «Յովհաննէս Նրզնկացի» տիտղոս-
սին տակ կը հրատարակէ այդ հեղինակին
անտիպ քերթուած մը, երկար, կրօնական
— բարոյական — տնօրինական պարունա-
կութեամբ: Զօպանեան կը կանխէ տալ հե-
ղինակին կենսագրութիւնն եւ կարեւոր
ծանօթութիւններ անոր մատենագրական
գործի մասին, որմէ շատ բան դեռ անտիպ
մնացած ըլլալով՝ Զօպանեան կոչ կ'ուղղէ՝
«Թէ՛ Ս. Ղազարու Միաբանութեան եւ Թէ՛
Ներսէսաղէմի Ս. Յակոբեանց վանքի Միա-
բանութեան» որպէս զի մէկը կամ միւսը
երկուսէն առնէ Նրզնկացիի լիակատար
գործին հրատարակութեան աշխատանքը:
Դեղեցիկ գաղափար եւ ազնիւ փափաք:
Նրանի՛ց Թէ՛ Ժամանակներն ու միջոցներն:

Ուսաց. Ն. Ադոնց կը շարունակէ «Քրմ-
նութիւն Մովսէս Կալանկատուացու»
պատմական հետազոտութիւններով եւ հա-
մատութիւններով, Հ. Վ. Հացունիի
հետ ունեցած բանավէճի առիթով՝ Խորե-
նացի - Կաղանկատուացի խնդրով:
Գրական - գրքոգրական բաժնին մէջ՝
Վահրամ Սիմոնեան ունի «Հայգիրք - Ալ-

փաստան» տեսակ մը վիպերդ կամ զիւցադ-
ներդութիւն, այդ վայրադ աշխարհակալի
մասին՝ որ մեր Անին աւերեց:

Վահրամ Թաթուլ ունի «Երեմ Խնձոր» եւ
«Դաւիթ եօթնամեայ». առաջինը քնարա-
կան, երկրորդը՝ վիպերգ։

Գեղամա Քէլէսի թէճեան «Գեորման աշխարհալալական ձգտումներու ներշնչման ազդիւրները» յօդուածով կ'ուզէ վերլուծել այն միսթիքը «որ... իր ամբողջ ուժով աշխատէր աստուածականացած կառավարութեան մը վրայ՝ որ իրեն օժանդակ ունէր զինուորական վիթխարի կազմակերպութիւն մը: Այդ պայմաններուն տակ է որ ծնունդ ախտի առնէր նաեւ Գեորմանի ամէն բանէ վեր յառակնոտ նշանաբանը»:

Կը յաջորդէ բանաստեղծ Ա. Սեմայի ռազմականէն «Կոռուի երթ»-ը որ ստորեւ կը կրէ կնիքը վերջին ահեղ մարտին. «Քիւնակի մէջ, 1939 Նոյմ.»: Մենք ալ սրտառուէ եւ աղնիւ տողեր ստացանք ժամանակին այդ ճակատագրական բանակէն՝ նոյն աղնիւ տասնապետ Սեմայէն: Սեղմուած սրտով կը սպասենք բարի լուր մը իրմէ ու իր եղբայրակից հազարաւոր մեր ազգակիցներէն:

կիցներէն :
Կ'աւարտի թիւը Գրիգոր Կիւեանի «Ե-
րեւ երգ» ուժեղ քնարականով, որ իսկա-
պէս ներաշխարհի արտայայտութիւններ
կը բովանդակէ, հոգեկան ու գաղափարա-
ւան խորհրդածութիւններով :

г. б. ф.

Թերթու մանուկէն դուրս քաշելու վրայ էինք երբ վերջին պահուն ցառով իմացանք Միսրանուքեան ըստմականական անդամ Գեղյ. ՅՈՎՀԱՆՆԵՍ Վ. ԹՈՐՈՍԵԱՆԻ մանուկան գոյժը:

Յուշի 8 ին երեկոյեան՝ որպէսզի յայնչեալ իմաստանոցին մէջ:

Սգաւոր Ուխտիս համօրէն անդամները փութացին սնոր մօտ, աղօթքով ու խունկով
կատարեցին հանդիսատք յաղարկաւորութիւնը՝ մասնակցութեամբ մեր վարժարաններու
անկէկոյն յաղարկաւորութեան մը:

սաներուն, բարեկամներու և ազգայնականութեան օգնութեամբ հասնող ցեղային և բնական հաճողի կեանքին և բնական գործունէութեան:

Յաշորդը քիչով պիտի անդրադառնա՝ հետքեր չթողնելով:

քեան մասին: